

ՀՏԴ 37.091.3

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ՄԱԿԲԱՅԱԿԱՆ ԲԱԶՄԻՄԱՍ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ  
Ավետիսյան Գ. Հ.

Ի տարբերություն ածականների՝ մակբայական բազմիմաստ բառերն զգալիորեն քիչ են: Այդպիսի բազմիմաստ բառերի ուսուցումը շահեկան է կազմակերպել վերլուծական-համադրական մեթոդի կիրառմամբ, որով կարելի է անցկացնել ընդհանրապես հատկանշային բազմիմաստ բառերի ավանդումը:

**Բանալի բառեր.** մակբայական բազմիմաստություն, վերլուծական-համադրական մեթոդ, գործողության հատկանիշ:

Թեև «Մակբայ» խոսքի մասի ուսուցումը տրվում է հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանում և թեմայի յուրացմանը տրվում է յոթ դասաժամ, այնուամենայնիվ մակբայական բազմիմաստության մասին դպրոցական դասագրքերում անդրադարձ չկա: Այդ առումով շահեկան կլինի մեկ դասաժամի սահմաններում՝ թեմայի կրկնության, ամրապնդման ժամին թե՛ տեսական, թե՛ գործնական ճանապարհով մակբայական բազմիմաստությանն անդրադառնալ:

Անառարկելի է այն փաստը, որ կիրառական իմաստով մակբայները ցույց են տալիս բայերի և ածականների հատկանիշ: Այդ բառերի կիրառական առանձնահատկությունների վերաբերյալ ամբողջական գիտելիքի հաղորդումը, մասնավորապես մակբայական բազմիմաստություն հանդես բերող բառաձևերի ուսուցման անհրաժեշտությունը շահեկան է սովորողների պատկերավոր մտածողության ձևավորման և բառապաշարի հարստացման գործընթացում: Մեր կողմից առաջարկվող մոտեցմամբ՝ մակբայական բազմիմաստ բառերի վերաբերյալ հաղորդվող տեսական և հատկապես գործնական ուղղվածություն ունեցող աշխատանքները էապես կարող են նպաստել քերականական նյութի գիտակցական յուրացմանը:

Մակբայական բազմիմաստ բառերի իմաստային տեսակները և նրանց ուսուցումը ճիշտ կազմակերպելու համար նպատակահարմար է, որ սովորողները նախապես վերհիշեն անցած նյութը՝ փաստելով, որ ընդհանրապես մակբայները լինում են տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի և ընդհանրական: Նրանց դասակարգումը կատարվում է ըստ այդ բառերի գանազան քերականական հարաբերությունների արտահայտման [1]:

Սովորողներին հիշեցնել ենք տալիս, որ, ըստ Ս. Աբրահամյանի, «Մակբայի ամենատարածված կիրառությունը գործողության հատկանիշ ցույց տալն է, հետևապես և բայի վրա դրվելը» [2]:

Ըստ Լ. Խաչատրյանի՝ «Մակբայը, որոշ վերապահումով, չհուլովվող ու չթեքվող խոսքի մաս է, որն ունի ուրույն բառակազմություն, շարահյուսական մակարդակում կատարում է ստորոգյալի գործառույթ՝ արտահայտելով գործողության կամ դրության հատկանիշ՝ հատկանիշի հատկանիշ» [3]:

Էդ. Աղայանը մակբայներ է անվանում այն բառերը, որոնք ցույց են տալիս բայերի և ածականների հատկանիշը: Այդ բառերի կիրառական առանձնահատկությունը, ըստ նրա, որպես որոշի որոշիչ կամ որպես պարագա հանդես գալն է [1]:

Բազմիմաստ ձևի մակբայների ուսուցմանն անդրադառնալիս կարևորում ենք այն հանգամանքը, որ բազմիմաստ մակբայներն իրենց բոլոր իմաստներով ցույց են տալիս գործողության կատարման ներքին (որակական) հատկանիշ.

**աստվածորեն** – 1. աստվածաբար, 2. փխբ. արտակարգ՝ բացառիկ կերպով

**դակտորեն** – 1. դալուկությամբ, 2. փխբ. թույլ՝ աղոտ կերպով

**թատերականորեն** – 1. թատրոնին բնորոշ կերպով, 2. փխբ. կեղծ՝ շինծու կերպով

**տղայաբար** – 1. տղային հատուկ կերպով, 2. փխբ. անփորձ կերպով

**ժայռաբար** – 1. ժայռի պես, 2. փխբ. աննկուն կերպով,

անպարտելիորեն

**հեթանոսաբար** – 1. հեթանոսին բնորոշ կերպով, 2. փխբ.

բարբարոսաբար

Ինչպես տեսնում ենք, հիմնականում փոխաբերության շնորհիվ են մակբայները բազմիմաստ:

Գործողության կատարման արտաքին-ձևային հատկանիշ է ցույց տալիս **հուշիկ** (1. կամաց-կամաց, ծանրաքայլ, 2. զգուշորեն, 3. մեղմ) մակբայը:

**Բազմիմաստ ժամանակի մակբայներ.** Ժամանակի մշտատևություն է ցույց տալիս **հավերժ** (1. հավերժաբար, 2. փխբ. երկարատև, անընդհատ) բառը:

Ուսուցման արդյունավետությունից ելնելով՝ դասարանը բաժանում ենք երկու համագործակցային խմբի: Հիմք ունենալով մակբայների տեսակների մասին սովորողների ստացած հիմնավոր գիտելիքները՝ խմբերից մեկին տրվում է մակբայի վերաբերյալ Լ.Խաչատրյանի հետևյալ դատողությունը. «Մակբայը, որոշ վերապահումով, չհոլովվող ու չթեքվող խոսքի մաս է, որն ունի ուրույն բառակազմություն, շարահյուսական մակարդակում կատարում է պարագայի գործառույթ՝ արտահայտելով գործողության կամ դրության հատկանիշ՝ հատկանիշի հատկանիշ» [1]: Երկրորդ խմբին՝ Էդ. Աղայանի դատողությունը, համաձայն որի՝ մակբայներ են դիտվում այն բառերը, որոնք ցույց են տալիս բայերի և ածականների հատկանիշը: Աշակերտական երկու խմբերն առանձին-առանձին քննարկում են երկու լեզվաբանների դատողությունները: Ապա խմբերը խառնվում և իրար են փոխանցում ձևավորված դատողությունները: Այնուհետև նոր խմբերից մեկն ստանում է բազմիմաստ *ձևի* մակբայների, մյուսը՝ բազմիմաստ *ընդհանրական* մակբայների բառախումբ: Երկու խմբերում էլ ընթանում է քննարկում, որը նպաստում է նշված բառախմբերի բացահայտմանը և յուրացմանը: Մակբայների իմաստային խմբերից բազմիմաստություն են ցուցաբերում ձևի, ինչպես նաև ընդհանրական տեսակները:

Ընդհանրական մակբայների ուսուցման ընթացքում սովորողներին պետք է գիտակցել տալ, որ ընդհանրական մակբայները միննույն կիրառությամբ տարբեր իմաստներ են արտահայտում կամ տարբեր կիրառություններում տարբեր իմաստներ են դրսևորում, ինչը մակբայների ներբառությային բազմիմաստության արտահայտությունն է [4]:

**Ձևի և չափի մակբայ. չարաչար** – 1. խիստ չար՝ դաժան կերպով (ներքին – որակական հատկանիշ), 2. սաստիկ (չափի իմաստը՝ հատկանիշի սաստկացումով):

**Ձևի և ժամանակի մակբայ. տարածամ** – 1. անժամանակ, վաղաժամ, 2. ուշացած, ուշ ժամանակ:

**Ժամանակի և տեղի մակբայ. հետ** – 1. դեպի ետ (առարկայի այս կամ այն կողմի՝ իբրև տեղի նկատմամբ մասնավորում), 2. հետո (տարրորոշված ժամանակ):

Ածականական բազմիմաստ բառերի շրջանակներում սովորողներն արդեն ձեռք են բերել գիտելիքներ ած./մկբ. տարաբժեքության մասին:

Այս դեպքում նպատակահարմար է ուսուցանել մակբայական ծագմամբ երկարժեք բառերն ածական // մակբայ տարաբժեքության շրջանակներում, ինչպես նաև մակբայ // կապ երկարժեք բառերը:

**Ած./մկբ. ուշ** – 1. ուշացած, ուշանալով (մ.), 2. ուշ ժամանակ (մ.), 3. ուշ ժամանակվա (ա.):

**Մկբ./կապ. հար** – 1. շարունակ, անդադար (մ.), 2. կից, կողքին (կ.), 3. նման (կ.):

**Գոյ./մկբ./ կապ. վար** – 1. ներքև, ցած (մ.), 2. ներքևի կողմը (գ.), 3. դեպի ներքև (մ./կ.):

Միջբառությանին իմաստային հարաբերությունների տեսանկյունից բազմիմաստ մակբայները լինում են հիմնականում հոմանիշ և հականիշ: Հոմանիշային մակբայներ են՝

**Հավերժ** (1. հավերժաբար, 2. փխբ. երկարատև, միշտ, անընդհատ) – **հար** (1. շարունակ, միշտ, անդադար (մ.), կից, կողքին (կ.):

**Չարաչար** (1. դաժանորեն, 2. սաստիկ) – **հեթանոսաբար** (1. հեթանոսի պես, 2. փխբ. բարբարոսաբար):

**Կծու** (1. կծու համ ունեցող (ա.), 2. փխբ. խայթող, վիրավորող (ա./մ.) – **դառը** (1. դառնահամ (ա.), 2. փխբ. անախորժ, տհաճ (ա./մ.), 3. **ծանր** (ա./մ), 4. տխուր (ա./մ.) ածական/մակբայ երկարժեքություն դրսևորող բառերը հոմանիշներ են՝ ըստ մակբայական իմաստների:

Այդպես նաև՝ **մերկ, տկլոր** – 1. առանց հագուստի, 2. փխբ. ընչագուրկ, 3. խեղճ:

**Անհամ** (1. համից գուրկ, 2. փխբ. անախորժ) – **անալի** (1. աղ չպարունակող, 2. փխբ. անհամ, անախորժ, 3. փխբ. տաղտկալի) և այլն:

Բազմիմաստ մակբայների հականշության ուսուցման սկզբունքը հասկացական հակադրություն դրսևորելն է. տարարմատ հականիշներ են:

**Հապճեպ** (1. հապշտապ, 2. փխբ. շտապելուց ոչ լրիվ կատարված) – **հուշիկ** (1. կամաց-կամաց, 2. զգուշորեն, 3. մեղմ):

**Ուշ** (1. ուշանալով (մ.), 2. ուշ ժամանակ(կ), 3. ուշ ժամանակվա (ա.): Բազմիմաստ բառը ևս նշված իմաստներով հականիշ է **հապճեպ**-ին:

Վերջինիս նկատմամբ հականիշություն է ցուցաբերում նաև **համր** (1. դանդաղ, 2. տարտամ) բառը:

**Հուշիկ** մակբայն իր երկրորդ իմաստով հականիշ է **հեթանոսաբար** (1. հեթանոսի պես, 2. փխբ. բարբարոսաբար) բառին՝ ըստ նշված իմաստի, իսկ երրորդ իմաստով հականիշ է **հորդ** (1. վարար, 2. հորդառատ կերպով) բառին (աձ./մկբ.)՝ ըստ մակբայական նշանակության:

**Դալկորեն** (1. դալուկ կերպով, 2. փխբ. աղոտ՝ թույլ կերպով) – **թունդ** (1. ակոհոյլը շատ, 2. մուգ, խիտ, 3. ուժգին, սաստկապես – աձ./մկբ.):

**Դալկորեն** բառը նշված իմաստով հականիշ է նաև **ժայռաբար** մակբային (1. ժայռի պես, 2. փխբ. աննկուն՝ անպարտելի կերպով):

Որպեսզի սովորողները ձեռք բերեն գործնական կարողություններ, պահանջվում է այդ բառերը գործածել նախ բառակապակցությունների, ապա՝ նախադասությունների մեջ: Նրանք դիտարկում են դրանց իմաստները և մեկ անգամ ևս համոզվում, որ այդ բառերը բազմիմաստ են:

Դիտարկելով մակբայների իմաստային այսպիսի դրսևորումները՝ սովորողները հանգում են այն եզրակացության, որ այդպիսի մակբայները բազմիմաստություն են դրսևորում ձևի և չափի, ձևի և ժամանակի, ժամանակի և տեղի ընդհանրական նշանակություններով:

Ամփոփման այս փուլում առաջարկվում է կատարել այնպիսի վարժություններ, որոնք ավելի գիտակցական են դարձնում ձեռք բերած գիտելիքները:

**Վարժություն 1.** Որոշե՛ք հատվածում գործածված բազմիմաստ մակբայների տեսակներն ըստ իմաստի և մեկնաբանե՛ք:

Այստեղ օդն այնքան խեղդուկ էր, որ մարդիկ հազիվ կարողանում էին շունչ քաշել: Շնչյունները վայրկենաբար ընդհատվեցին: Բժիշկը կամացուկ հաղորդեց նրան որդու ժամանման լուրը: Նա տխրում էր մենակ, առանց զավակների: Թվում էր, որ վաղուց, շատ վաղուց է բաժանվել նրանցից և կարծես անջատված էր նրանցից հավիտյան: Մոսկվա վերադառնալու մասին նա առայժմ չէր մտածում: (Ալ. Շիր.):

**Վարժություն 2.** *Գիշեր - ցերեկ, ընդմիջտ, շուտով, վաղօրոք, երբեք* ժամանակի մակբայները գործածե՛ք նախադասությունների մեջ:

**Վարժություն 3.** Տրված դարձվածքներում ընդգծե՛ք բազմիմաստ տեղի մակբայները: Բացատրե՛ք դարձվածքի նշանակությունը և դրանք գործածե՛ք նախադասությունների մեջ:

*Դռնեղուր ընկնել, գենքը ցած դնել, վեր- վեր թռչել, Աստված հեռու տանի:*

**Վարժություն 4.** Ներկայացրե՛ք ձևի և ժամանակի, ժամանակի և տեղի բազմիմաստ մակբայներ: Դրանք գործածե՛ք նախադասությունների մեջ և մեկնաբանե՛ք իմաստները:

Ըստ հատկանշային բազմիմաստ մակբայների ուսուցման յուրահատկությունների, նրանց մեթոդաբանական և լեզվաբանական հիմունքների՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Անհրաժեշտ է սովորողներին խորությամբ ներկայացնել հատկանշային խոսքի մասերը, հատկապես համեմատել ածականն ու մակբայը և նրանց բազմիմաստությունը, ինչը կնպաստի աշակերտների պատկերավոր մտածողության ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը:

2. Մակբայական բազմիմաստ բառերի ուսուցման գործընթացում տեսական և գործնական նշանակություն հաղորդելով դասընթացին՝ հարկ է սովորողների գիտակցական յուրացմանը հանգել:

Մակբայների իմաստային տեսակների վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները կհանգեցնեն աշակերտների պատկերավոր խոսքային հմտությունների ձևավորմանը:

3. Բազմիմաստ մակբայների ուսուցման գործընթացում աշակերտները ձեռք են բերում գիտելիքներ բառերի ձևաիմաստային խմբերի վերաբերյալ, դրանց գործնականում կիրառելու, բազմիմաստ և համանուն բառերը տարբերակելու հմտություններ են հանդես բերում, ինչը նպաստում է գեղարվեստական խոսք կառուցելու օրինաչափությունների յուրացմանը:

Թեմայի ուսուցման շրջանակներում ուսուցանողի առաջադիր նպատակը պետք է լինի հայոց լեզվի, մասնավորապես բազմիմաստ մակբայների ուսուցման նկատմամբ պարզել սովորողների վերաբերմունքը և տարաբնույթ առաջադրանքների միջոցով ամրապնդել մակբայական բազմիմաստ բառերի մասին գիտելիքներ: Սովորողների մեջ ձևավորել գեղարվեստական բնագրերից օգտվելու, բնագրի շուրջ աշխատանք կատարելու հմտություններ:

## МЕТОДИКА ИЗУЧЕНИЯ МНОГОЗНАЧНЫХ НАРЕЧИЙ

Аветисян Г. О.

В отличие от прилагательных, многозначных наречий довольно немного. Обучение таким многозначным словам следует организовывать системно с использованием аналитико-синтетического метода, можно осуществлять введение характерных многозначных слов в целом.

**Ключевые слова:** полисемия наречий, аналитико-синтетический метод, атрибут действия.

## ADVERBIAL POLYSEMANTIC WORDS AND THEIR TEACHING

Avetisyan G. H.

Unlike adjectives, the adverbial polysemantic words are quite few. The teaching of such polysemantic words is beneficial to organize especially with the use of an analytical-synthetic method, by means of which it is possible to carry out the introduction of the characteristic polysemantic words in general.

**Keywords:** adverbial polysemy, analytical-synthetic method, action attribute.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արբահալյան Ս. Ժամանակակից հայերենի քերականություն: Եր. ՀՍՍՀ ԳԱ, 1969: 322 էջ:
2. Աղայան Էդ. Լեզվաբանության հիմունքներ: Եր., Հահպետիրատ: 1987: 736 էջ:
3. Խաչատրյան Լ. Լեզվաբանության ներածություն: Եր., «Զանգակ-97»: 2008: 304 էջ:
4. Քյուրքչյան Ա. Ս. Հայերենի մակբայները: Եր., «Էդիթ Պրինտ»: 2011, 510 էջ:

**Տեղեկություններ հեղինակի մասին**  
**Ավետիսյան Գ. Հ.**  
Շիրակի պետական համալսարան  
Էլ. փոստ՝ [gayaneavetisyan2@gmail.com](mailto:gayaneavetisyan2@gmail.com)

*Տրվել է խմբագրություն 09.10.2019*